

ԲԱՂՅՅՈՒՍԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱՆ ԱՐԺԵՔԸ

ԱԼ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հարադրությունն, իբրև բառաբարդման եղանակ, մեծ ու կարևոր դեր է խաղում հայոց լեզվի բառապաշարի հարստացման ու զարգացման գործում: Հարադրությամբ կազմվում են կրկնավոր (օրինակ՝ արագ-արագ, երամ-երամ, կարմիր-կարմիր, լավ-լավ, բիշ-բիշ..., բան-ման, առո՛ք-փառո՛ք, մանր-մու՛ր, աման-շաման...), անվանական (օրինակ՝ անքիվ-անհամար, սխուր-տուրում, կամա-ակամա, վարպետ-դաստիարակ, տուն-քա՛նգարան, մսուր-մանկապարտեզ..., գրական-գեղարվեստական, հասարակական-տնտեսական, կուլտուր-լուսավորական...), բայական (օրինակ՝ շուտ գալ, լաց լինել, աշխի ընկնել, կուշ տծել, երես տալ, ձեռք առնել..., անցնել-գնալ, բազմել-փախչել, ծլել-ծաղկել, զնալ-զալ...) և նաև բաղճյուսական (օրինակ՝ ախ ու վախ, վարճ ու բարճ, կարգ ու կանոն, աչ ու ձախ, ոտ ու ձեռ, ցա՛մ ու ցրիվ, սար ու ձոր...) բարդություններ:

Ընդհանրանալով մի՛ հարադրության հիմունքով, դրանք միաժամանակ տարբերվում են իրարից և հատկանշվում առանձնահատկություններով: Բաղճյուսական բարդությունների բնորոշ առանձնահատկությունն այն է, որ նրանց բաղադրիչներն իրար հետ կապվում ու միանում են ու (եբրեմն՝ և) համադասական շաղկապով: Իսկ դա նշանակում է, որ նրանք առաջ են գալիս ինքնուրույն բառային միավորների կամ արմատական ձևույթների բաղադրմամբ: Այսպես՝ սար և ձոր, տուն և տեղ, լաց և կոծ, խաղ և պար, օր և արև, ծիլ և ծաղիկ, մեծ և փոքր, ներս և դուրս, այս և այն, հինգ և վեց, քար և քարափ և այլն զուգադիր ձևերից յուրաքանչյուրը ինքնուրույն բառային միավոր է, անշուշտ, իր համապատասխան իմաստով կամ իմաստներով, խոսքամասային նշանակությամբ, քերականական կարգերով ու հատկանիշներով:

Բայց երբ դրանք հարադրվում ու կապվում են իրար հետ ու (եբրեմն՝ և) շաղկապով, գրկվում են ինքնուրույնությունից և կազմում մի նոր բառական միություն կամ բարդություն, որը և մի ընդհանուր՝ հավաքականության, միասնության, ամբողջության կամ հոգնակիության նշանակություն է արտահայտում և բարդ ու բազմազան պատկեր ներկայացնում բաղադրիչների կապերի ու փոխհարաբերությունների տեսակետից: Այդպիսով, բաղճյուսական բարդությունները փաստորեն բուն հարադրությունների և կցական բարդությունների միջին տեղն են բունում. քանի որ նրանց բաղադրիչները շատ սերտ կապով շեն արտաբերվում և գրավոր խոսքում էլ առանձին են գրվում, բարդությունը կապվում է հարադրության հետ և նրա մի տեսակն է: Իսկ երբ նրանք սերտորեն են արտասանվում և գրավոր խոսքում միասին գրվում, բարդությունը հարադրությունից կցականության է վերածվում և կցական բարդություն դառնում: Բայց այս դեպքում ևս պատկերը միատեսակ չէ, և դարձյալ գոյություն ունեն տարաստիճանավորումներ: Բաղճյուսական բարդությունների բաղադրիչների կապը պայմանավորվում է նրանց արտահայտած իմաստների անշակցության կամ հարաբերության սերտության աստիճանով:

Դրա համապատասխան էլ ասա՝

ա) Կան բարդություններ, որոնց բաղադրիչները միացել, միաձուլվել և ընդհանրապես միասնաբար են գործածվում, ինչպես, օրինակ՝ ամպուզամպ, այբուբեն (//այբբեն), անցուդարձ, առևտուր (//առուտուր), ասուլիս, արդուգարդ, բացուխուփ, զուեղուկծիկ, ելումուտ, Լեռուզեռ, լիուլի, կեռումևռ, կեռուխում, հատուկենտ, հարցուփորձ, միեռևար, շարդարարդ, Կարգուփշուր, շերմուտենդ, նիստուկաց, տարուբեր, խոբղուբոբ, քարուհանդ..., այբեծի//այբուծի, կլեչ, երթենկ, որբայրի և այլն՝:

¹ Բայց պատահում են դեպքեր, երբ առանձին հեղինակներ որոշ ձևեր նաև բաղադրիչների տարանջատ գրությամբ են գործածում:

բ) Կան բարդութիւններ, որոնց բաղադրիչները երկու ձևով՝ թե՛ տարանջատ և թե՛ միասին-միաստեղ են գործածվում, ինչպես, օրինակ՝ աղ ու հաց//աղուհաց, ահ ու դող//անուդող, ամիս ու կես//ամիսուկես, առ ու ավար//առուավար, բուխ ու բորան//բուխբորան, դար ու դարդար//դարուդարդար, դեղ ու դարման//դեղուդարման, դես ու դեն//դեսուդեն, ետ ու ետ//ետուետ, լաց ու շոր//թացուշոր, թև ու թիկունք//թևուքիկունք, թիգ ու կես//թիգուկես, թուփ ու մուր//թուփուր, լեն ու բուլ//լենուրլ, լուռ ու մուկ//լուռումուկ, խաղ ու պար//խաղուպար, խեղճ ու կրակ//խեղճուկրակ, խոսք ու գրույց//խոսքուգրույց, ծակ ու ծուկ//ծակուծուկ, կարգ ու կանոն//կարգուկանոն, կար ու ձև//կարուձև, կոշտ ու կոպիտ//կոշտուկոպիտ, հաց ու քաց//հացուքաց, շենք ու շենքեմ//շենքուշենքեմ, ոչ ու փուլ//ոչուփուլ, չուլ ու փալաս//չուլուփալաս, սար ու ձոր//սարուձոր, վարճ ու բարճ//վարճուբարճ, վեր ու վեր//վերուվեր, տակն ու վեր//տակնուվեր, տուն ու տեղ//տունուտեղ, ուշ ու միտք//ուշումիտք, քար ու քարաքի//քարուքարաքի, քիթ ու մուր//քիթումուր, օր ու արև//օրուարև և այլն:

գ) Կան բարդութիւններ, որոնց բաղադրիչները բացառապես առանձին են գործածվում, ինչպես, օրինակ՝ ազգ ու տղինք, այլան ու բայլան, աչք ու ունք, արտ ու հանդ, բակ ու դուռ, բան ու բրիչ, գայլ ու գագան, գանձ ու գահ, գող ու ավագակ, դաշտ ու ձոր, դատ ու դատաստան, երգ ու պար, բանկ ու էման, բուփ ու ծառ, ժանգ ու փոշի, իղձ ու տենշանք, լավ ու վատ, խամ ու խոպան, ծով ու ցամաք, ծափ ու ծիծաղ, հաստ ու բարակ, հին ու նոր, հիգ ու շանք, մարդ ու կին, շանք ու կրակ, շիր ու շամիչ, պոչ ու ականջ, շանք ու ետանդ, սև ու սպիտակ, սուգ ու շիվան, վիշտ ու ցավ, սանձ ու խնձոր, ցավ ու հոգս, ուժ ու ետանդ, ուրախ ու զվարթ, փառք ու պատիվ, Բուն ու դաղար, օր ու տարի և այլն²:

Բաղճյուսական բարդութիւնների յայտ երեք տեսակները, որոնցով և նրանց իրական վիճակն է նշվում, իրարից ոչ միայն արտահայտման ձևով կամ արտաքնապես, այլև հնչյունական, ձևաբանական, իմաստարանական կողմերով ու ընդհանուր գործածութիւնում են տարբերվում: Իրրև մի ամբողջութիւն կամ համադրական բառ գործածվող ձևերը, որ ճիշտ կլինեն հենց բաղճյուսական կցական բարդութիւններ կոչել, համադրական բառային միավոր են հանդիսանում: Նրանք ավելի վերառնված, մի նոր լայն նշանակութիւն են արտահայտում, մի ամբողջական բառույթ են ըմբռնվում, մի ընդհանուր բառային շեշտ են առնում (հմմտ. անտա՛ւ < ա՛ռ և տո՛ւր, կերուխո՛ւ < կե՛ր ու խո՛ւմ, եռուզե՛ն < ե՛ն ու զե՛ն, ջարդուրուրդ < ջա՛րդ ու բո՛ւրդ...), մի ամբողջական՝ համադրական բառին հատուկ քերականական կարգեր ու իրողութիւններ են դրսևորում:

Այն բաղճյուսական բարդութիւնները, որոնց բաղադրիչները կ՛ միացած, կ՛ անջատ են գործածվում, մի դեպքում՝ առաջին, իսկ մյուս դեպքում երկրորդ խմբի հարադրութիւնների հետ են կապվում: Գրանով նրանք անցումային վիճակ են ներկայացնում և, բնականաբար, ունենում իրենց ինչպես համադրական, այնպես էլ կցական ձևերը (հմմտ. կա՛րգ ու կանա՛ն—կարգուկանոն, ծակ՛ի ու ծո՛ւկ—ծակուծուկ, լո՛ւտ ու մո՛ւկ—լուտումուկ, տարի՛ ու կե՛ս—տարիուկե՛ս...), որոնք և ընդհանուր առմամբ նույն իմաստն են արտահայտում³:

Եվ, այնուհանդերձ, դրանք միմյանց նկատմամբ նաև ինչ-որ տարբերութիւններ են երկվան հանում: Համադրական (կցական) ձևերում բաղադրիչներն իմաստային ավելի սերտ կապով են կապվում իրար հետ, բարդութեան ընդհանուր նշանակութիւնն ավելի է գորանում և շեշտվում վերջին բաղադրիչը (հմմտ. ա՛ղ ու հա՛ց—աղուհա՛ց, կո՛շտ ու կոպի՛տ—կոշտուկոպի՛տ, խե՛ղճ ու կրա՛կ—խեղճուկրա՛կ, սո՛ւն ու տե՛ղ—տունուտե՛ղ...), իսկ հարադրական ձևերում բաղադրիչների իմաստային կապը համեմատաբար թույլ է լինում, նրանցից յուրաքանչյուրն իր համապատասխան շեշտն է ունենում և ընդգծվում իր իմաստով:

Այդ հատկանիշները, սակայն, առավել ցայտունորեն են արտահայտվում երրորդ խմբի՝ այն բաղճյուսական բարդութիւնների մեջ, որոնց բաղադրիչները բացառապես առանձին են գործածվում, ինչպես, օրինակ՝ դատ ու դատաստան, բանկ ու էման, գող ու ավագակ, փառք ու պատիվ, շանք ու ետանդ, աղմուկ ու աղաղակ, մայր ու աղջիկ, կրիվ ու վեն, անկ ու ջանի, այս ու այնտեղ, սև ու սպիտակ և այլն:

² Կան գրողներ, որ անգամ այսպիսի բաղճյուսական բարդութիւնների բաղադրիչները միասին են գրում. օրինակ, Հր. Մաթևոսյանի «Մեր վազքը» ժողովածուում այդպես են գործածված հորումոր (էջ 57), զնալուգալ (էջ 68), ետուառաջ (էջ 70), սնուսուգ (էջ 94), հայրուարդի (էջ 108), կեղտուփոշի (էջ 112), մաքրուարդի (էջ 154), մարդուկեղ (էջ 204) և այլն բաղճյուսական բարդութիւններ:

³ Եվ հաճախ է պատահում, որ նույն հեղինակը իր մի գործում նույն բաղճյուսական բարդութիւնը մերթ այսպես, մերթ այնպես է գործածում:

Նման կազմութիւնները, որ ոչ թե քիչ են, ինչպես ոմանք են կարծում, այլ շատ ու շատ են և բաղճյուսական բարդութիւնների հիմնական մասն են կազմում, մի կողմից եթե ավելի են հարում ու ազերակցում բառերի սովորական շարահյուսական կապակցութիւններին, ապա մյուս կողմից խիստ ու որոշակի ընդհանրութիւններ են երևան հանում բուն անվանական կամ հարակցական հարադրական բարդութիւնների նկատմամբ: Եվ իսկապէ՛ս. ինչպես փաստերն են ցուց տալիս, նույն բառերի հարադրութեամբ կազմվում են թե՛ ռ (երբեմն՝ և) շաղկապով և թե՛ առանց շաղկապի բազմաթիվ ու բազմաքանակ հարադրական բարդութիւններ, հմմտ.

ահել ու ջահել	ահել-ջահել
աղմուկ ու աղաղակ	աղմուկ-աղաղակ
աղչիկ ու սողա	աղչիկ-սողա
ամառ ու ձմեռ	ամառ-ձմեռ
այս ու այն	այս-այն
այստեղ ու այնտեղ	այստեղ-այնտեղ
աչք ու երես	աչք-երես
բահ ու բրիչ	բահ-բրիչ
բեղ ու մորուք	բեղ-մորուք
բոյ ու բուսաթ	բոյ-բուսաթ
բու ու ագռավ	բու-ագռավ
բուք ու բորան	բուք-բորան
գիշեր ու ցերեկ	գիշեր-ցերեկ
գնալ ու գալ	գնալ-գալ
գող ու ավազակ	գող-ավազակ
դեղ ու դարման	դեղ-դարման
դեղ ու ճար	դեղ-ճար
դես ու դեն	դես-դեն
դուռ ու դարպաս	դուռ-դարպաս
երկար ու բարակ	երկար-բարակ
զենք ու զրահ	զենք-զրահ
էգուց ու էլօր	էգուց-էլօր
թել ու ասեղ	թել-ասեղ
թև ու թիկունք	թև-թիկունք
լավ ու վատ	լավ-վատ
խաչ ու ավետարան	խաչ-ավետարան
խուլ ու համր	խուլ-համր
ծաղիկ ու կանաչ	ծաղիկ-կանաչ
ծառ ու ծաղիկ	ծառ-ծաղիկ
կահ ու կարասի	կահ-կարասի
կանաչ ու կարծիք	կանաչ-կարծիք
կիսատ ու պռատ	կիսատ-պռատ
կոշտ ու կոպիտ	կոշտ-կոպիտ
հագուստ ու կապուստ	հագուստ-կապուստ
հավ ու աքլոր	հավ-աքլոր
հինգ ու վեց	հինգ-վեց
հող ու ջուր	հող-ջուր
ձայն ու ծպտուն	ձայն-ծպտուն
ձեռ(ք) ու ոտ(ք)	ձեռ(ք)-ոտ(ք)
ձյուն ու ձմեռ	ձյուն-ձմեռ
ճիչ ու աղաղակ	ճիչ-աղաղակ
ճիչ ու աղմուկ	ճիչ-աղմուկ
ճիչ ու գոռոց	ճիչ-գոռոց
մեզ ու մշուշ	մեզ-մշուշ

⁴ Անվանական հարադրական բարդութիւնների համար պրոֆ. էդ. Աղայանը նառակցական անվանումն է գործածում, որը բավական հաջող և ընդունելի ենք համարում:

մուխ ու ծուխ	մուխ-ծուխ
մուրճ ու մանգաղ	մուրճ-մանգաղ
նետ ու աղեղ	նետ-աղեղ
շատ ու շատ	շատ-շատ
շատ ու քիչ	շատ-քիչ
շենք ու շնորհք	շենք-շնորհք
շուռ ու մուռ	շուռ-մուռ
ողջ ու առողջ	ողջ-առողջ
չորս ու հինգ	չորս-հինգ
չուլ ու փալաս	չուլ-փալաս
սև ու մութ	սև-մութ
սրան ու նրան	սրան-նրան
վերև ու ներքև	վերև-ներքև
վեր ու վար	վեր-վար
տաք ու պաղ	տաք-պաղ
տեր ու տնօրեն	տեր-տնօրեն
տխուր ու տրտում	տխուր-տրտում
տղա ու աղջիկ	տղա-աղջիկ
տուն ու տեղ	տուն-տեղ
ցորեն ու գարի	ցորեն-գարի
ուրախ ու վզարթ	ուրախ-զվարթ
փառք ու պարծանք	փառք-պարծանք
քիթ ու բերան	քիթ-բերան և այլն:

Ձուգադիր ձևերի յայ ցանկը, որ բերվում է գրավոր աղբյուրներից քաղած տվյալների հիման վրա, ցույց է տալիս, որ մեծ մասամբ տարանջատ բաղադրիչներով գործածվող բաղ-հյուսական բարդություններն են նաև հարակցության (առանց շաղկապի) արտահայտվում: Բայց այստեղից, իհարկե, չկատարվում է եզրակացնել, թե դա պարտադիր օրենք է, և կամ՝ բոլոր անվանական (հարակցական) բարդությունները՝ իրենց բաղհյուսական, իսկ բաղհյուսականներն էլ անխտիր իրենց հարակցական ձևերն ունեն. ամենևին: Հարակցական ձևեր են ունենում միայն որոշ և հատկապես ժողովրդախոսակցական լեզվում գործածվող բաղհյուսական բարդությունները, որոնք այնտեղ հեշտորեն ու շաղկապը հապավման են ենթարկում: Այսպիսով՝ շատ հաճախ նույն հասկացությունը արտահայտվում է հարադրության տարբեր, բայց իրար համարժեք ձևերով, որոնք և, անշուշտ, ոչ միայն իմաստային ինչ-ինչ տարբերություններ են դրսևորում, այլև հարստացնում են հայոց լեզվի բառագանձը, դարձնում այն ավելի բազմաբան և բազմաճեղի:

Բաղհյուսական բարդությունները հայոց լեզվի բառապաշարի հարստացմանը նպաստում են նաև նրանով, որ, հարադրական բարդություն լինելով հանդերձ, իրենց հերթին հիմք են ծառայում նոր բարդությունների համար: Նկատելի է, որ ամենից առաջ այն բաղհյուսական բարդությունները, որոնց բաղադրիչները իմաստային սերտ կապի մեջ են գտնվում, միացել են կամ իրար միանալու միտում ունեն, նոր բաղադրյալ բառեր են կազմում ածանցման կամ բառաբարդման միջոցով, ինչպես, օրինակ՝ աղուհացակեր (←Մենք հենց բարեկամ շենք ու մի կտոր աղուհացակեր ենք, ա՛յ իմ աղուհացը նրա աչքերը բռնեք, ԳԳ, ԵԺ, 1,235), աղուհացամուտ, անաղուհաց, այրուրեհական, անցուղաբձային, անցուղաբձել (←Ջգալ են տալիս անցուղաբձողին», ԳՍ, ԵԺ, 4,141), առևտրաբոլորներական, առևտրային, առևտրական, առևտրավայր..., ասուլիսել (←Ջանում են հանել ածականների գիմակը ողորկ, Որ ասուլիսեն Անհայտության հետ», ԳՍ, ԵԺ, 2,115), արդուարդային, էլումուտել, էլմուտական, էլմուտային, էլեկային, եռուզեռալ, եռուզեռում, երբևկելի, երբևկություն, լացուկոծել, ծաղումաճակել, հարցուփորձել, վարուվերում, վարուվարում, վարուվարել, տակեուլբայություն, տարուրբուրել, տարուրբում, փարուհեղել, փարուհեղում, խուլումամուրյուն, տուրևառություն, այլև՝ հայր ու որդիական (←... հաստատվում է մի ամուր հայր ու որդիական կապ, ԳԳ, ԵԺ, 7,410) հայր ու որդիություն (←... էլ հեր ու վուրբուրիքը գանա վիր ննգավ աշխարբեմն», ԳՍ, ԵԺ, 1,260) և այլն:

Սրանք, սակայն, որ գոյական են, ածական կամ բայ, առանձնապես մեծ տեսակարար կշիռ չունեն և աննշան տեղ են գրավում բաղհյուսական բարդությունների մեջ ընդհանրապես:

եմ, ընդհանրապես, ինչպես վաղուց է մատնանշված, բաղճյունական բարդությունները մեծ մասնակցություն են ցուցաբերում հարադրական բայերի կազմությանը. թե՛ տարանշատ և թե՛ միացած բազադրիչներով գործածվող շատ բաղճյունական բարդություններ այլևայլ բայերի (անել, լինել, գալ, գառնալ, տալ և այլն) հետ հարադրվելով՝ բազմաթիվ հարադրավոր բայեր են կազմում, ինչպես, օրինակ՝ այն ու վախ անել (տալ, բաշել), այն ու վայ անել, այն ու վիշ անել, այն ու ռի անել (բաշել), այսպե՛ս ծանակ անել (լինել), աղ ու լու անել, անկ ու մանկի գալ, անկ ու մանկ լինել, անցուդարձ անել, առևտուր անել, առ ու ծախս անել, առ ու ավար անել, առ ու մեռ լինել, առ ու փախ անել, ասուլիս անել, բան ու զործ անել, բարձր ու ցածր անել, բաց ու խուփ անել (լինել), զուգ ու կծիկ անել (անել, գալ, դառնալ, լինել, կտրել), դեզ ու դիր //դեզ ու դարմանե// դեզ ու ճար անել, դեմ ու դարձ անել, դեմ ու դեմ անել (ածել, գցել, գնալ, ընկնել, թռչել, ձգել, տալ, բաշել, շշել), դուրս ու ներս անել, էլեէջ անել, էլի ու մուտք անել, եռուզեռ ընկնել, ետ ու առաջ անել (ածել, գնալ, գցել, վազել, տանել, շշել), ետ ու ետ գնալ, էրբ ու գալ անել, եփ ու թուփ անել, թաք ու կրունկ լինել, թառ ու մառ անել (լինել), թել ու դերձան դառնալ (լինել), թև ու թիկունք անել (դառնալ, լինել), բուք ու մուր անել (անել, դառնալ, լինել, տալ, տանել, ուտել, բաշել), ժած ու մած անել (գալ), ծուռ ու մուռ գալ (լինել), լաց ու կոծ անել (դնել), լաց ու շիվան անել, խաղի ու խայտառակ անել (լինել, դառնալ, դարձնել, շինել), խոսք ու գրույց անել (լինել), խուրդ ու խաշ անել (լինել), ծանր ու բեթև անել, ծուլ ու ծուլ լինել, ծուխ ու մալս անել (տալ), ծուռ ու մուռ անել, կալ ու կապ անել (գցել, ընկնել, լինել, ձգել), կանաչ ու կարմիրն տալ, կար ու ձև անել, կաց ու կամ անել, կեռ ու մեռ անել (լինել), կերուխում անել, կուզ ու կուզ անել, կուշ ու կուշ անել (անել, գալ), կուշ ու ձիգ անել (գալ, լինել), հալումաշ անել (դառնալ, լինել), հանգ ու հուց անել, հատ ու կտոր լինել, հարց ու խնդիր անել (լինել), ձեռ ու ոտ անել (ընկնել, լինել), ձիգ ու պուկ անել, ճար ու կտոր անել (լինել), ճագ ու տուզ անել (լինել), նթառ ու կաց անել, ջուռ ու մուռ գալ (ածել, բերել, տալ), ոտ ու ձեռք ընկնել (գցել), ոչ ու փուշ անել (լինել), շափ ու ձև անել, շեմ ու շում անել, շարդ ու բուրդ անել (լինել), շարդ ու փշուր անել (լինել), շերմ ու տեղ անել (լինել), սագ ու բագ անել, սար ու ձոր գցել (ընկնել), սև ու սպիտակին տալ, սար ու բոլ ընկնել, սուզ ու շիվան անել (գցել), վայր ու վեր/վար ու վեր անել, վար ու ցանք անել, վեր ու դիր անել, վեր ու վեր անել (լինել), վրա ու վրա տալ, տակն ու վրա անել (դառնալ, լինել, դարձնել), տակ ու երես անել, տարուբեր անել (լինել), տար ու կուր լինել, տուն ու տեղ անել (դառնալ, լինել), տուր ու բակ անել (տալ, ուտել), ցանուցիր անել (լինել), ցափ ու ցրիվ անել (գալ, ընկնել, լինել), ցիր ու ցան անել (ընկնել, դառնալ, լինել), ուծ ու կող անել, ուխտ ու երդում անել, փոխ ու դուրս անել, փաղ ու փար անել, փար ու փանդ անել (լինել), փար ու փուլ գցել (ընկնել), փիթ ու մուրք անել, փռ ու փուշ անել (լինել), օր ու գիշեր անել և այլն:

Այսպիսով՝ հարադրավոր բայերի կազմությանը մասնակցում կամ իրրև հարադիր են գործածվում իրոր բազմաթիվ ու բազմատեսակ բաղճյունական բարդություններ, որոնց բազադրիչները իրար հետ սերտ կապի մեջ գտնվելով՝ արտահայտում են.

ա) Հակադիր իմաստներ, ինչպես, օրինակ՝ առևտուր անել, առ ու ծախս անել, բարձր ու ցածր անել, բաց ու խուփ անել, դեմ ու դեմ անել, դուրս ու ներս/ներս ու դուրս անել, էլեէջ անել, էլի ու մուտք անել, ետ ու առաջ գցել, ծանր ու բեթև անել, սար ու ձոր գցել, վայր ու վեր անել, վեր ու դիր անել, տակն ու վեր անել, տակն ու վրա լինել, տարուբեր լինել և այլն:

բ) Նույն կամ մոտ իմաստներ, ինչպես օրինակ՝ այն ու վախ անել, այսպե՛ս ծանակ լինել, բան ու զործ անել, լաց ու կոծ անել, ճագ ու տուզ անել, նթառ ու կաց անել, ոչ ու փուշ անել, շարդ ու փշուր լինել, շերմուտեղ անել, սուզ ու շիվան անել, տուր ու բակ ուտել, ցան ու ցիր անել, ուխտ ու երդում անել... այլև՝ ջուռ ու մուռ գալ, շեմ ու շում անել, ժած ու մած անել, ծալ ու ծուլ լինել, հանգ ու հուց անել և այլն:

գ) Իրար հարաբերակից կամ առնչակից իմաստներ, ինչպես, օրինակ՝ անցուդարձ անել, առ ու փախ անել, գունդուկծիկ դառնալ, եփ ու թուփ անել, թել ու դերձան դառնալ, թև ու թիկունք լինել, կանաչ ու կարմիրն տալ, հալումաշ անել, ձեռ ու ոտ ընկնել, շափ ու ձև անել, վար ու ցանք անել, փիթ ու մուրք անել և այլն:

Բաղճյունական բարդություններն իրենց այդ իմաստների համապատասխան էլ այնպիսի հարադրավոր բայեր են կազմում, որոնք երկկողմանի՝ հակառակական, համանշանակ կամ հա-

⁵ Տե՛ս հատկապես մեր «Հայերենի հարադիր բայերը», Եր., 1966, էջ 89—90, 167—172:

բարբերակից գործողությունների նշանակություն են արտահայտում⁶։ Գրանով նրանք համարում են բալ խոսքի մասը, հարստացնում նրա բառային և իմաստաբանական կազմը։ Բացի այդ, բաղձյուսական բարդություններ կազմված հարադրվոր բայերը ոչ թե սովորական բայական-բառությունների միավորներն, այլ մեծագույն մասով նաև դարձվածքներ են, որոնք իրենց հերթին ևս ժողովրդի պատկերավոր մասծողությունը, նրա երևակայությունը սեղմ ձևերով դրսևորելու մեծ ուժն ու կարողությունն են ցուցադրում։

Բաղձյուսական բարդությունները, սակայն, շատ ավելի մեծ դարձվածաբանական արժեք ունեն։ Նրանք ոչ միայն դարձվածքային հարադրավոր բայեր. այլև բազմաթիվ «մաքուր» դարձվածքներ են կազմում, օրինակ՝ աղ ու հացը ուրանալ, աղ ու հացը երեսով տալ, աղ ու հացը մոռանալ, աղ ու հաց ուտել, աղ ու հացով (մարդ), աղ ու հացը հաբամ անել. թուֆ ու մուր կուլ տալ, թուֆ ու մուր տալ, թուֆ ու մուր աանել, թուֆ ու մուր կրել, թուֆն ու մուրը մարսել... ձեռք ու սոխ անել, ձեռք ու սոխը կապկել, ձեռք ու սոխ ընկնել, ձեռ ու սոխը տեսնել. շուն ու կատու դառնալ, շուն ու կատու լինել, բան ու գործ անել՝ դարձնել՝ շինել, բան ու գործ ունենալ, բան ու գործից ընկնել և այլն։

Գրանց առանցքը, ինչպես դժվար չէ նկատել, բաղձյուսական (տվյալ դեպքում՝ աղ ու հաց, թուֆ ու մուր, ձեռք ու սոխ, շուն ու կատու, բան ու գործ) բարդությամբ արտահայտված բաղադրիչն է, որով և գեղազանցապես բայական դարձվածքներ են կազմվում, հմտ. նաև՝ թուֆ ու մուրը բերեղումը ցամախել (ՊՊ, ԵԺ, 1, 116), խելք ու միտքը բացնել (կորցնել), կուժն ու կուլան (մեկի) գլխին կտրել, ձեռ ու սոխից զնալ, ծայն ու ծպտուն շնանել, մաշկ ու մաքրի բռնել, մուկ ու կատու դառնալ (խաղալ), շունչ ու հոգի տալ, շափ ու սահմանը անցնել (կորցնել, անցկացնել), ֆիք ու մուրք անել, ֆիք ու մուրքը կտխել (չարդել), օր ու արև տալ (տեսնել), օր ու արևը խավարել և այլն⁷։

Կան բաղձյուսական բարդություններ, որոնք փոխաբերական իմաստ արտահայտելով՝ ինքնին նույնպես դարձվածք են կազմում, օրինակ՝ աղ ու հաց («1. Երախտիք, բարերարություն. 2. Բարեկամության խորհրդանիշ»), գրող ու ցավ («Անեծքի արտահայտություն՝ գրողը քեզ տանի, մեռնես, չոռ ու ցավ»), դեղ ու դաբման («Միչոք. հնար»), երկար ու բարակ («Երկարաձգված, ձանձրացնելու շափ»), թև ու քիկունք («Չվանավոր, ապավեն, պաշտպան, գորավիգ»), խաղ ու պար («Շատ հեշտ, դյուրին բան»), խնդն ու կրակ («Խեղճ, Քշվառ, անկարող, ողորմելի»), շար ու կրակ («Չար, դաժան, շարություն պատճառող»), շուն ու (գե) գայլ («1. Բազմազան կարգի՝ տարբեր, օտար մարդիկ. 2. Ամեն մեկը, տեղից վեր կացողը»), ֆար ու ֆացախ («Հանդիմանություն, նախատինքի, դժգոհանքի արտահայտություն՝ չոռ, զահրումար»), օր ու արև («1. Կյանք, հույս, ապավեն. 2. Բախտավոր՝ բարեկեցիկ կյանք. 3. Բարեկեցիկ ապրուստ») և այլն։

Այսպիսով, իբրև հարադրության մի առանձին տեսակ, բաղձյուսական բարդությունները բառակազմական ու դարձվածաբանական կարևոր դեր են կատարում հայոց լեզվում։ Սերելով հիմնականում կենդանի խոսակցական լեզվի զուլալ ակունքներից, նրանք բերում են նոր բովանդակություն, արտահայտում բազմազան իմաստներ, խոսքին տալիս առանձին շունչ ու կենդանություն, առանձին արտահայտչականություն ու գեղեցկություն։ Գրա համար էլ նրանք լայն գործածություն ու կիրառություն ունեն ամենից առաջ գեղարվեստական գրականության մեջ։ Բազմաբանակ բաղձյուսական բարդություններ են սփռված հայ գրողների ու բանաստեղծների և առանձնապես՝ Խ. Աբովյանի, Պ. Պոռչյանի, Ղ. Աղայանի. Բաֆֆու, Գ. Սունդուկյանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Ա. Բակունցի, Պ. Սևակի, Հովհ. Շիրազի և շատ ուրիշների լեզվում։

Օգտվելով ժողովրդական լեզվի և հայ բարբառների հարուստ գանձերից, նրանց բառ ու բառից, գեղարվեստական խոսքի մեծ վարպետները հատկապես հմտորեն են գործածում բաղձյուսական բարդությունները, դրանց միջոցով ևս իրենց խոսքը դարձնում ավելի պատկերավոր, գեղեցիկ ու հմայիչ։ Լավագույն ապացույցը ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանի ստեղծագործություններն են, որոնցում բաղձյուսական բարդությունները շողշողում

⁶ Տե՛ս մեր «Հայերենի հարադիր բայերը», էջ 167—172։

⁷ Լ՛նդհանրապես դարձվածային բաղձյուսական բարդությունների մասին տե՛ս Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, Հր. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, Քիֆլիս, 1913, Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հհ. 1—4, Երևան, 1944—45, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հհ. 1—4, Եր., 1969—80, էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, Ա. Սուխոսյան, Ս. Գալստյան, Հայերենի դարձվածաբանական բառարան, Եր., 1975։

են բազմերանց ծաղիկների պես, օրինակ՝ Չեղոս պակաս, ուժըս հատած, Հազար ու մի ցավի տեր, Բնձ են նայում մերկ ու սոված Մի տուն լիքը մանուկներ (1, 13), Կը մեռնեն և ես այս ցավերի տակ, Ինձ հետ տանելով ինձ ու փափագ (1, 24), Մենք ազատ չենք ահ ու դողից (1, 26), Ո՛վ, որ կանչում ես գիշեր ու ցերեկ Հազար ցավերով, հազար ձևերով (1, 28), Հանկարծ տիրեց ահ ու սառածից հաղաղանիստ վայրերին (1,56), Երկիրքն ամպած, տխուր ու սև լաց է լինում միայր (1,68), Դես ու ղեն ցրված ամպերն հողմավար Փնտրում են, ասես, մի տեղ, օթևան (1,101), Եվ ես ծանոթ եմ այն հրաշալի Գույն ու ձեռքին արևազալի (1,102), Եվ կյանքն այնտեղ ծանր ու խավար Մի գիշեր է ահավոր... (1, 122), Դուք էլ, անուշ սար ու ձորեր, Չեք դիմանա էս դարդին (1,134), Ա՛խ, ի՛նչ լավ են սարի վրբա, Անցնում օրերն, անճճ, անո՛ւշ, Անըրջալի՛ն, Թեթևասա՛հ. Ամպ ու հովերն անո՛ւշ, անո՛ւշ (1,136), Ու մենք շունենք տեղ ու դադար, Երկրից երկիր ցիրուցան (1,147).— Հապա ինչո՞ւ դու օրն ի բուն, էս լուս ու մութ առավոտուն, էս շատ անուշ գով հովերուն Այս ու վախով կուլաս արուն (1,162), Ողջո՛ւն, ողջո՛ւն ձեզ հին ու նոր Արի, բարի ընկերներ (1,197):

Այդպես և բանաստեղծը գործ է ածել սև ու սուգ, հով ու զով, լեն ու ազատ, խինդ ու սեր, Ենեզ ու դավ, հաշտ ու խաղաղ, շեն ու լի, մեն ու մեհակ, շար ու խավար, դար ու փոս, բուք ու բուհա, կոտ ու կես, ծաղիկ ու խոտ, վարձ ու փող, խեղճ ու որբ, ծանր ու մեծ, լավ ու վատ, բույր ու եղբայր, խոր ու խոր, զենք ու զրան, կազմ ու պատրաստ, լաց ու կոծ, լոխի ու մեջիկ, զան ու թաց, շեն ու փառ, մարդ ու կին, վերջ ու մահ, կոշտ ու կոպիտ, ուշ ու միտ, բել ու ասեղ, տեղն ու տեղ, հար ու հավետ, խեղճ ու կրակ, գիր ու կապ, ծամ ու պատարագ, մազ ու միտուհ, բանկ ու էծան, ցավ ու դարդ, օր ու կյանք, հինգ ու վեց, առ ու փախ, լուս ու մուգ, ձոր ու լեռ, շար ու շառ, ահել ու չահել, բուք ու նախատինք, թագ ու պակ (←Սև ու սուգ լինի թագ ու պրսակդ», 2,64), կյանք ու ջան (←Իմ օր ու արև, կյանք ու ջան որդի», 2,67), ծառ ու ծաղիկ, դափ ու զուռնա, ողբ ու լաց, ծաղր ու ծանակ, երգ ու սաղ, հարցուփորձ, փառուհանդ, նետ ու աղեղ, աղ ու հաց, լաց ու թաց (Աղ ու հացով, լաց ու թացով Առաջն ելավ, խնդիրք արավ», 2,115), փար ու հող, փար ու կապան, ձոր ու կապան, դուռ ու դրկից, մահ ու ցավ, տեղ ու տարափ, վար ու ցանք, զարմ ու ցեղ, զանձ ու զահ, զենք ու զորք, կրակ ու բոց, ճար ու դեղ, ահ ու մահ, բոճ ու բոճ (Ու ահավոր բոճ ու բոճից, անդունդներից էն մըթին, Հուրհրեղեն իր Թներով ցուլաց կրակ Քամի ձին», 2,170) և շատ ու շատ բաղճյուսական բարդություններ, որոնք և մեծ մասամբ կյանք ունեն նաև ժողովրդական լեզվում:

Բայց սա, իհարկե, չի նշանակում, թե գրողներն ու բանաստեղծները բավարարվում են միայն պատրաստի բաղճյուսական բարդություններ գործածելով և ոչ մի բանաստեղծական սշխատանք չեն կատարում. ամենևին՝ Իբրև լեզուն մշակող ու կատարելագործող վարպետներ, նրանք բաղադրյալ այլ բաների հետ ստեղծում են նաև բաղճյուսական բարդություններ, որոնք նոր հասկացություններ ու գաղափարներ են արտահայտում: Դրա լավագույն ապացույցն էլ, օրինակ, տալիս է Պ. Սևակը, որի ստեղծագործություններում նույնպես բաղճյուսական բարդությունները բավական մեծ թիվ են կազմում⁸. Բանաստեղծը իրեն հատուկ վարպետությունը գործածել է ավելի քան 400 բաղճյուսական բարդություններ, որոնց մի մեծագույն մասը, օրինակ՝ անց ու դարձ (1,26), բերք ու բարիք (1,27), օր ու գիշեր (1,62), տանձ ու խնձոր (1,130), ետ ու առաջ (1,163), հազար ու մի (1,229), փար ու փարափ (1,194), խեղճ ու կրակ (4,8), աչ ու ձախ (4,88), հող ու ջուր (4,101), դարդ ու ցավ (4,111), բաց ու խուփ (4,139), ծանր ու թեթև (2,86), ոչ ու փուշ (2,92), ամպ ու զամպ (2,29), քիթ ու մուր (2,103), կոծ ու կուլա (3,135), խնք ու մեք (3,190), ձեռ ու ոտ (2,125), հին ու նոր (1,426), զուգուկծիկ (1,289), զենք ու զրան (4,198), լաց ու կոծ (4,82), հիծ ու պիծ (4,95), վեր ու վար (4,121), լուս ու մուգ (4,131), վար ու ցանք (4,206), կեր ու խում (4,252), սուս ու փուս (4,259), շուտ ու մուտ (4,276), ջարդ ու փշուր (4,62), շար ու բարի (6,267), զնալ ու զալ (4,276), շարժ ու ձև (1,472), հատ ու կենտ (1,472), ծափ ու ծիծաղ (4,118) և այլն, եթե շատ սովորական ժողովրդական բնույթի բաներ են, ապա մի այլ մասը, օրինակ՝ փայլ ու ծափ (1,20), խելք ու բեազդ (1,25), գիրք ու հրաշք (1,27), լույս ու հրթիռ (1,52), զերբ ու դրոշ (1,153), սյուն ու խոյակ (1,153), խոսք ու հայացք (Մենք խոսք ու հայացք խոստումով էր շնչում», 1,206), սեր ու ցնար (1,256), ցուլ ու երանգ (1,276), բան ու բան (1,332), վանք ու պալատ (1,427), կշիռ ու արժեք (1,440), տրոփ ու բարախ (1,492), ծափ ու ձեռք (2,48), լույս ու ամպ (2,118), դոփ ու տրոփ (4,24), երգ ու եղանակ (4,126), բիծ

⁸ Միանգամայն ճիշտ է վարվել Արտ. Պապոյանը, դրանք իր՝ «Պարույր Սևակի շափաթի բանարանում» ներկայացնելով իբրև գլխաբաներ:

ու փռչի (4,137), հոսք ու ետք (4,140), ճանկ ու ժանիք (4,158), հոսք ու հոստանք (4,188),
հեճարք ու հույս (4,216), զավ ու զավաթ (4,219), շափ ու կշռույթ (4,268), ռուսք ու ական
(4,277), սյուն ու մույթ (6,75), բախտ ու սեր (4,164), շափ ու շափանեթ (6,218), ձոր ու
խորշ (6,262) և այլն, անշուշտ, ինքը բանաստեղծն է կազմել:

Իսկ սա արդեն ցույց է տալիս, որ բաղճյունությունը՝ ու շղկապի միջոցով հարադրա-
կան բարդություններ կազմվելու եղանակը բավական գործուն է և քանի գնում, այնքան էլ
անում է ու գորանում:

Բաղճյունական բարդությունները առավել մեծ շափով գործ են ածվում մանավանդ շա-
փածո ստեղծագործությունների, մանկական գրականության լեզվում: Կազմվելով տարաստի-
ճան իմաստներով հարաբերակից բառերի հարադրությամբ, նրանք զանազան իրողություններ
ու երևույթներ իրար հետ համեմատելու ու հարաբերելու լայն հնարավորություններ են ընձե-
ռում, շատ ու շատ հասկացություններ արտահայտում պատկերավոր ձևով, սեղմություն ու հա-
կիրճություն տալիս բանաստեղծական խոսքին, նպաստում վանկի, հանգի համաշափության
ու կշռույթին: Ահա և այդ հաստատող մի քանի օրինակներ դարձյալ Պ. Սևակի ստեղծագոր-
ծություններից.

Այս զավով էլ եկե՛ք հարգենք
Եվ անբառում հիշատակը
Կամար-կամուրջ ֆաշողների,
Սյուն ու խաչքար տաշողների,
Սանդ ու երկանք կտրողների,
Ելք ու ճամփա փնտրողների,
Վանք ու պալատ շինողների,
Կտրիճ զավակ ծնողների,
Աղբյուր-առու սարեղների,
Փող ու թմբուկ զարկողների,
Ինչպես նաև հիշատակը
Նրանց հիշող-հարգողների... (1,427):

Վերադառնում էր, գալիս էր հիմա
Նա՛նք անբաղ զոքը նույն առուփախի,
Խելարորբեր նույն սառ ու պաղի,
Մեր պար ու խաղի.
Մեր երգ ու տաղի,
Այն միակ հույսը և ապավիներ... (4,227):

Եվ արքում է շրջակայքում ամեն ինչ՝
Մարդ ու գազա՛ն,
Բույս ու մրջյուն՛ն,
Սիրտ ու ծե՛րպ (6,182):

Այսպիսով՝ բանաստեղծական ընդամենը 22 տողում գործածված են 12 բաղճյունական
բարդություններ, որոնց մի մասը (առուփախ, սառ ու պաղ, պար ու խաղ, երգ ու տաղ, մարդ
ու գազան...) եթե նույնպես սովորական ձևեր են, ապա մյուս մասը (սյուն ու խաչքար, վանք
ու պալատ, բույս ու մրջյուն, սիրտ ու ծեղր...) իսկապես անհատական ստեղծագործություն
են: Գրանցով բանաստեղծը փոխհարաբերություններ է տեսել այնպիսի երևույթների միջև, ո-
րոնք իրականության մեջ շատ հեռավոր կապերով են կապվում իրար հետ: Այդպես էլ ստեղծ-
վում են բազմաթիվ նոր բաղճյունական բարդություններ, որոնք հարստացնում են հայոց լեզվի
բառակաշարն ու նրա իմաստարանական կազմը, ոճական-արտահայտչական մեծ դեր կա-
տարում գեղարվեստական խոսքում:

Եվ այսպիսով՝ բաղճյունական հարադրական բարդությունները ընդհանրապես գեղարվես-
տական, պատկերավոր, գեղեցիկ ու հիասքանչ խոսք կերտելու լավագույն միջոց են, որը և
հիասքանչորեն է կիրառել նաև Հովհ. Շիրազը, օրինակ, իր «Սիամանթո և Եղեզարե» հույս-
կապ ստեղծագործության մեջ: Այդտեղ նա գործ է ածել ոչ միայն այնպիսի բաղճյունական
բարդություններ՝ սառ ու ձոր, սառ ու ֆար, դաշտ ու ձոր, նեցու ու զուլա, ուշք ու միտք, քն
ու թիկունք, գիշեր ու զօր, ձոր ու լեռ, կյանք ու մահ, վիշտ ու ցավ, հայր ու մայր, հաղ
ու ֆար,՝ զենք ու զրահ, ֆար ու կապան, ձոր ու կապան և այլն, որոնք վաղուց են ամ-
րակայված լեզվում, այլև ստեղծել է շատ նորերը, որոնք փայլուն ու արտակարգ բանաստեղ-

ծական-պատկերավոր մտածողության արգասիք են և պայմանավորվում են պոեմի ներքին բովանդակությամբ ու էությունով: Բանաստեղծն իրար է համադրել աստղն ու ամպը, աստղն ու աղբյուր, աստղն ու շանթը, ծոփն ու հովը, հավքն ու հովը, հույսն ու վիշտը, գույնն ու բույրը, կանչն ու խուժը, հույսն ու հավը, հույսն ու տեգը, թուրն ու ձին, սարն ու յարը, հույսն ու լուրը և բոս աղյժ էլ կազմել աստղ ու ամպ («Օտաղիկ ոտքը Վանա ծովում, գյուխն՝ աստղ ու ամպերում», 6), աստղ ու աղբյուր («Հեռվում՝ աստղ ու աղբյուրների մանյակաշարն իր կրծքին՝ Մովսարը՝ հարսի տեսքով դուրսի կուզեր Վարագին», 53), աստղ ու շանթ («Սանդուղք դառել՝ երկինքն առել՝ աստղ ու շանթ է ցած բերում», 6)։ Ծով ու հով («Ինչ անուշ եք, սարի օրեր, Սար ու ձորեր Սիփանա, Հայ պապերու դաշտ ու ձորեր, Ծով ու հովեր իմ Վանա», 9)։ հավի ու հով («Ու սարն ի վեր հավի ու հովեր զարթնեցնող երգ դարձան», 18), հույս ու վիշտ («Օտար երկրից Սիամանթոն հույս ու վշտով ձայն տվեց», 39), գույն ու բույր («—Չէ, կգտնի,— շնչացիս ծաղիկներն՝ այն մեղմիկ, Յոթը հազար գույն ու բույրի ծաղիկները Սիփանա»։ 48), կանչ ու խուժ («Հանկարծակի կանչ ու խուժով այնպես մտավ կովի մեջ», 51), հույս ու դավ («Քայց քնած էլ մնաց կույր, անտեղյակ հույս ու դավից», 57), հույս ու տեղ («Իրար մատից արյուն առան, իրար դառան հույս ու տեգ», 64), թուր ու ձի («... Այսպես ահա Սիամանթոն թուր ու ձիու տեր դառավ», 65), սար ու յար («Ու շրջում էր Սիամանթոն՝ սար ու յարով դեռ տարված», 68), հույս ու լուր («Ու դուրս ելավ պառավն ուրախ, հույս ու լույսով իշով մարի, 80)... բաղճյուսական բարդությունները, որոնք և մի-մի զարդ են, իսկապես, պոեմի լեզվի ամբողջ շուրջվածքի մեջ:

Եվ այսպես՝ թե՛ կենդանի լեզվից ու բարբառներից առնված և թե՛ անհատապես ստեղծված բաղադրություններով շարունակ աճում ու հարստանում են բաղճյուսական բարդությունները: Իսկ դա նշանակում է, որ նրանք երբեք քարացած ու անշարժ չեն մնում, այլ անվերջ մակրոսթացությունների ու տեղատվությունների են ենթարկվում: շատ բաղճյուսական բարդություններ կա՛մ արդեն համադրական (կցական) բարդություններ են դարձել, կա՛մ գտնվում են այդպիսի դառնալու ճանապարհին, շատ բաղճյուսական բարդություններ գործածվում են երկուստեք՝ համադրական (կցական) և հարադրական ձևերով, և այսօր էլ նրանց միջև որոշակի պայթյուր է գնում:

Եվ չնայած դրան, բաղճյուսական բարդությունները, ինչպես փաստերն են ցույց տալիս, հիմնականում ու գերազանցապես վերլուծական (հարադրական) բնույթի բարդություններ են: Ուրեմն և՛ ա) ամբողջապես կցական դարձած բաղճյուսական բարդությունները բնավ էլ մեծ թիվ չեն կազմում և առանձնապես մեծ տեսակարար կշիռ չունեն հարադրական բարդությունների համակարգում: Բ) այն բաղճյուսական բարդությունները, որոնք երկու՝ և՛ վերլուծական (հարադրական), և՛ կցական (համադրական) ձևերով են գործածվում, նույն ընդհանուր նշանակությունն ունենալով հանդերձ նրբբանագային իմաստներ են արտահայտում և կիրառվում են անհրաժեշտաբար՝ լեզվի իսկ ներքին պահանջով ու թխադրմամբ: Գ) այն բաղճյուսական բարդությունները, որոնք միայն կամ բացառապես վերլուծական (հարադրական) ձևերով են գործածվում, որակ են կազմում, որոշում նրանց բուն էությունն ու պատկերը:

Հիմնականում վերլուծական (հարադրական) բարդություններ լինելով՝ բաղճյուսական բարդությունները շատ ավելի անմիջականորեն առնչվում են բառերի սովորական շարահյուսական կապակցություններին և երևան հանում այնպիսի ձևեր, որոնք ուղղակի դրանց դրոշմն են կրում: Կան բաղճյուսական բարդություններ (տակնուվեր//տակն ու վեր, տակնուվերա//տակն ու վրա, տեղեւտեղը//տեղն ու տեղը//տեղեւտեղ, մեկնումեկը//մեկն ու մեկը), որոնցում բառահարաբերական ձևույթը՝ որոշիչ հոդը՝ քերականական նշանակությունից զրկվելով՝ լատի բաղադրիչ մաս է դարձել, օրինակ՝ Գյուղը քանդեցին, արին տակն ու վեր (ՀԹ, ԵԺ, Գ.33), Իմ ամբողջ կյանքը գրեթե անցել է շատ խաոր, տակն ու վրա (ՀԹ, ԵԺ, 5,394), Եվ տեղն ու տեղը իսկույն կանգնելով՝ ներքև նայեց (ՀԹ, ԵԺ, 3, 10), Ինձ տեղն ու տեղը կսպանեին (Աթ. Խնդ., Երկ., 55), Ժամանակ առ ժամանակ նրանք կտրում էին անտառի հսկա ծառերից մեկն ու մեկը (ՀԹ, ԵԺ, 3,350), Օսեփը ձեն է տալիս բակից, մեկնումեկին կանչում (ԱՔ. ԵԺ, 1,94), այլև՝ Սա իր ծնողաց միեւեռը զավակն էր (ՂԱ, ԵԺ, 4,327), Ես էլ քեզ պես աղչիկ էի, Աղքատ տան մեջ մին ու ետր (ՇԿ, ԵԺ, 265)՝:

Մաքսիմ Գորկու.— Այդպիսի ձևերը, հասկանալի է, չպետք է շփոթել այն բաղճյուսական բարդությունների հետ, որոնցում Բ-ն և Ե-ն իրրև հոդ են գործածվում, ինչպես՝ Կանգնիր հաս-

⁹ Միեւեռը բարդության մին բաղադրիչը ուղղակիորեն թաքում է մի բառից՝ և հոդի կցմամբ» (տե՛ս Ն. Ահաբյան, Հայերեն արմատական բառաբան, Գ հատոր, Եր., 1977, էջ 317):

տոցի մոտ, որ իմանաս իսկական շշխատանքի համն ու հոտը (ՍԱ, Ե., 2,379), Փոփոխակի ցուրտն ու տաքը հետևում են իրար (ՀԹ, ԵԺ, 5,325), Շաղն ու շողը, ծովն ու հովը միասին, Միշտ անդադար քեզ պատմեն իմ մասին (ՇԿ, ԵԺ, 410), Ոսն ու պռն սկսեց դժա պինդ ցցել (ԽԱ, ԵԺ, 264) և այլն:

Այսպիսով՝ իբրև հարադրության մի առանձին տեսակ, բաղճյուսական բարդությունները իրոք բառակազմական ուրույն արժեք ունեն և զգալիորեն հարստացնում են հայոց լեզվի թե՛ բառային, թե՛ իմաստաբանական և թե՛ դարձվածաբանական կազմը: Եվ, չնայած դրան, ներանք մինչև այսօր, դժբախտաբար, ոչ միայն առանձին ուսումնասիրության նյութ չեն դարձել, այլև հարկ եղած շահով տեղ չեն գտել հայոց լեզվի բառարաններում: Ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» շատ քիչ բարդություններ են, օրինակ՝ +հալումաշ, +հանգ ու հունգ, հարց ու փորձ, +հարց ու բարով, +հուր ու մուր, +ծախ ու ծուռ, +ձիգուպուկ, +ճոթ ու կտոթ, +ճորուպոտառ, +մանուման, մարք ու պատշան, մեկնումեկը, +մեկուճար, +միեուճար, +միեումեշ, +մուր(ն)ուլոյս, +հետ ու առաջ, +եետ ու աղեղ, +շան(ու)պան, +շեյուշոյ, +շուռ ու մուռ, +տտնուզուլս, +տտնուճոց, եերկայացվել իբրև առանձին գլխաբառ¹⁰:

Նետագա բառարաններում, ճիշտ է, ներկայացվել են շատ ավելի և բազմաթիվ նոր բարդություններ՝ գերազանցապես համադրական ձևերով¹¹, բայց, պատկերն առանձնապես չի փոխվել, և բաղճյուսական բարդություններն իրենց ողջ կազմով ու հարստությամբ չեն արտացոլվել նաև նրանցում: Սա բաղճյուսական բարդությունների ամբողջական բառարանի ստեղծման պահանջն է առաջադրում, և որի դեպքում էլ, բնականաբար, շատ ավելի պարզ պատկերացում կարելի է կազմել նրանց բառակազմական արժեքի ու նշանակության մասին:

ՀԱՄԱՌՈՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՔ, ԵԺ.— Ա. Բակունց, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1974:

ԱԹ. Խնկ. Երկ.— Ար. Խնկոյան, Երկեր, Երևան, 1980:

ԳՍ, ԵԺ.— Գ. Սունդուկյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1973:

ԽԱ, ԵԺ.— Խ. Արմաշյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1948:

ՀԹ, ԵԺ.— Հովհ. Քումանյան, Երկերի ժողովածու, հ. 3, 5, 6, Երևան, 1945—1959:

ՂԱ, ԵԺ.— Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1963:

ՄԱ, ԵԺ.— Մ. Արմեն, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967:

ՇԿ, ԵԺ.— Շ. Կուրդինյան, Երկերի ժողովածու, Երևան, 1947:

ՊԳ, ԵԺ.— Պ. Պոռչյան, Երկերի ժողովածու, հ. 1, 7, Երևան, 1962, 1964:

ՊՍ, ԵԺ.— Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 2, 4, Երևան, 1972—73:

А. С. МАРКАРЯН — Словообразующее значение соединительных сложных слов.— Соединительные сложные слова, будучи одним из типов несинтетического слово-сложения, имеют определенное словообразующее значение в армянском языке. Из разнообразных соотносительных слов с помощью соединительного союза *ու* (редко *և*) «и» образуются многочисленные сложные слова, компоненты которых в их составе обычно выступают раздельно, а иногда либо слитно, либо и слитно и раздельно. Словообразующее значение соединительных сложных слов заключается и в том, что а) в отдельных случаях из них образуются производные слова; б) многие соединительные сложные слова выступают в составных глаголах в качестве их первого компонента; в) из ряда соединительных сложных слов образуются разные фразеологизмы.

Соединение компонентов с помощью союза *ու* (*և*) — продуктивный способ армянского словообразования. Эти слова обогащают семантическую систему армянского языка и играют большую стилистическую роль, особенно в языке художественной литературы.

¹⁰ Թեչպես + նշանն է ցույց տալիս, Ստ. Մալխասյանցը նշողպիսի բառերը մեծ մասամբ իբրև «զավտական բառ կամ նշանակություն» է ներկայացրել:

¹¹ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 1—4, Երևան, 1969—80 և էղ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, ուր բաղճյուսական բարդությունները գերազանցապես երկու՝ թե՛ հարադրական և թե՛ համադրական ձևերով են տրված: